№ 47 Մարտի 14 (26) 1881 Մարտի 14 (26) № 47

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшака»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Օտար լրագիրները հանդուցեալ Կայսրի մասին։ Գերմանիա։ Անգլիա։ Թիւրքիա։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Վիճակագրութիւն։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Կամենսկայա, մարտի 1

Կարդալով ազգօգուտ «Մշակ» լրագրիդ մէջ առ ռուսիայենակ հայերիս Կ. Պոլսի հայոց «Միացեալ ընկերութեան» նպաստելու վերաբերմամբ տպված հրաւիրական յօդուածները և մի և նոյն ժամանակ հասկանալով, որ մենք ես, ռուսիայենակ հայերս, ինչպէս հարկն է, ի Նկատի ենք առնված յիշեալ ընկերութենից, վերջինիս իր նպատակների հասնելու համար, գոնեա նիւթական նպաստութեան կողմանէ (թէև «Մշակի» № 20-ի մէջ տպված Կ. Պոլսից պ. Նիկողոսեանի նամակն անշուշտ փոքր ի շատէ ազդասէր ռուսահայի սրտում ցաւակցութիւն պատճառեց, բայց առ այժմ յուսանք, որ ընկերութիւնը ինքը կը ճանաչէ, նամակի մէջ գրված au courant պահելու ցանկութիւնը հայերիս.) ուստի պարաք համարեցի յայտնել յիշեալ յօդուածների մասին տեղս գտնված փոքրաթիւ խումբ նոր-Նախիջևանցի հայերից նախ քանի մը ազնուամիտ անձանց, այն է՝ Աւետիք Խազիզեանի, Գրիգոր Խազիզեանի, Յովհաննէս Պոստանջեանի, Սիմէօն Մուռթեանի և Աւետիք Խանկուռեանի. և, տեսնելով սրանց կողմանէ ուրախութեամբ նպաստելու համաձայնութիւնն, բացինք ստորագրութիւն, յօգուտ յիշեալ ընկերութեան, որին մասնակցելով ես մնացեալ ազնուամիտ անձինքն, հաւաքվեցաւ գումար 101 ռուբլի 50 կոպ. բացի սրանից պ. Գրիգոր Խազիզեանի աշխատութեամբ, մի առանձին ստորագրութեան թերթիւ, յօգուտ Վասպուրականի սովեալների, հաւաքված է հայերից և ռուսերից գումար 42 ր. 50 կ. ի միասին առնելով երկու ստորագրութեան թերթերից հաւաքված գումարները 144 ռուբլի, ընդ սմին ուղարկում եմ առ ձեզ, խոնարհաբար խնդրելով յիշեալ գումարքն ըստ պատկանելոյն հասուցանելով, նաև բարեհաճէք մէկ ստորագրութեան այն է՝ յօգուտ «Միացեալ ընկերութեան» թերթի վրա ստորագրած նուիրատուների անունները տպել «Մշակ» լրագրիդ մէջ, որք են Աւետիք Խազիզեան 10 ր., Գրիգոր Խազիզեան 7 ր., Կարապետ Խանկուռեան 10 ր., Աւետիք Խանկուռեան 5 ր., Սիմէօն Մուռթեան 10 ր., Յովհաննէս Պոստանջեան 10 ր., Լուսեղէն Արծրունի 3 ր., Սիմէօն Աչաքովսքի 3 ր., Միքայէլ Խռմաջիեան 3 ր., Սարգիս Ղազարոսեան 5 ր., Գրիգոր Մաթոսեան 2 ր., Խաչատուր Մուռթեան 2 ր., Յարութիւն Ղամացեան 2 ր., Վարդերես Ճարտարեան 2 ր., Միքայէլ Զօռչօփեան 2 ր., Սարգիս Ասմայեան 1 ր., Գէորգ Պենկլիգուհարեան 1 ր., Համբարձում Չերիքչիեան 1 ր., Иванъ Никифоровъ 1 ր., Դանիէլ Ճալաղայեան 50 կ., Պաղտասար Սաղավեան 1 ր.։ Տիկինք՝ Նուրբիկէ Խանկուռեան 3 ր., Խսկուհի Խազիզեան 3 ր., Մարիամ Խազիզեան 3 ր., Մարիամ Մուռթեան 3 ր., Սրբուհի Պոստանջեան 3 ր., Յեղիսաբերտ Արծրունի 2 ր., Հռիփսիմէ Խռմաղժիեան 2 ր., և Աննա Զօռչօփեան 1 ր., գումարն 101 ր. 50 կ.։

Իսկ միասին յօգուտ Վասպուրականի սովեալների հաւաքած գումարն է 144 ր.։

Կարող չեմ չը յայտնել յիշեալ ազնուամիտ անձանց անկեղծ շնորհակալութեան արժանաւորութիւնքն, ի նկատի ունենալով անցեալ տարվայ ես Վանայ սովեալների դրութեան անուշադիր չը մնալն սրանց։

Կարապետ Խանկուռեան

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 12 մարտի

Տեսնելով Հալլաբարի ժողովուրդի անտարբերութիւնը դէպի իր մայրենի լեզուն և ընթերցանութիւնը, մենք ձեռնարկեցինք մի քանի պարոնների խորհրդով բանալ, կառավարութեան թոյլտուութեամբ, մի «ընթերցարան» Հալլաբարի հրապարակի վրա, որ Հալլաբարի կենտրոնն է։ Ուստի խնդրում ենք Հալլաբարի հասարակութեանը, որ անտարբեր չը մնայ դէպի այսպիսի մի բարի ձեռնարկութիւնը, յաճախէ մեր ընթերցարանը՝ որով կը ծանօթանայ իր մայրենի լեզուին։ Գուցէ շատերը մտածեն որ ընթերցարանը բանում ենք մեր սեփական օգտի համար, բայց ոչ. մենք առանց այս էլ շատ գործերով զբաղված ենք, միայն պատրաստ ենք մինչև անգամ տունը, կահ-կարասիքը ձրի տալ մեր սեփականութիւնից։ Բայց մեզանից ամեն մի անհատի պարտաւորութիւնն է կարողութեան չափ իր ծառայութիւնը անել ազգային ասպարիզի մէջ, որովհետև մեզանից մէկը պէտք է ապրի շատերի համար։ Ուրախ ենք, որ այսպիսի մի չնչին գործով կարողանում ենք հասարակական կրթութեան մէջ ծառայութիւն անել. մեր ունեցած լուման այս է որ զգում ենք ազգային գանձարանի մէջ։ Այս առթիւ շնորհակալութեան արժանի են պ. Գաբրիել Իշխանեանցը, և պ. Յովհաննէս Նազարեանցը, որոնք ամենաջերմ սրտով աշխատում են մեզ հետ գործը առաջ տանել։

Յարգոյ խմբագիր, խնդրաբար խնդրում ենք տեղ տալ մեր Նամակին ձեր պատուական «Մշակ» լրագրի մէջ, և ինչպէս միշտ ձեռնամուխ էք եղել ազգային գործերի մէջ՝ հրաւէր կարդալով ժողովուրդին դէպի մի ազգային գործը, այս մասին էլ կը խնդրենք նուիրել մի առաջնորդող յօդուած։

Աղասի Մելիք-Ադամեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս տարի սկսեց հրատարակվել ԹԻՖԼԻՍՈՒՄ «Судебные Порядки» իրաւաբանական չաբաթաթերթը։ Լրագրի խմբագիրը, երդվեալ հաւատարմատար Կարաբէդով, շատ համարձակ կերպով մերկացնում է մեր դատաստանական պաշտօնեաների զեղծումներն ու անիրաւութիւնները։ Անկարելի է կարծել, ասում է «Кавказъ» լրագիրը իր առաջնորդող յօդուածում, որ Կարաբէդով, իրաւաբան լինելով, չը հասկանար որքան մեծ պատասխանատուութիւն է առնում իր վրա, մերկացնելով իր թերթի մէջ անիրաւութիւններն ու բռնութիւնները, որոնք գործվում են մեր դատաստանական աշխարհում, նկարագրելով մեր դատաւորների վրէժխնդրութեան ու կամայականութեան օրինակներ, ուրեմն եթէ մինչև այժմ մեր դատաստանական պաշտօնեաները չեն կարողանում փաստերով հերքել պ. Կարաբէդովի

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Դեկտեմբերի 1-ին 1880 թ. ամբողջ գերմանական հողի վրա մի մեծ և նշանաւոր օպերացիա կատարվեց և այդ՝ ամբողջ կայսերութեան բնակիչների թուի իմանալու համար, «ազգահաշուութիւնն» էր, որը պարբերապէս ամեն հինգ տարի կատարվում է Գերմանիայում, որպէս նաև բոլով լուսաւորեալ երկիրներում։ Իւրաքանչիւր հոգի, մարդ թէ կին, աղջիկ-տղայ, պսակված-անպսակ, որք և այրի, գործաւոր թէ անգործ, բողոքական-կաթոլիկ թէ այլադաւան, բացակայ թէ ներկայ, կոյր-համր-խուլ, կամ ցընորված թէ առողջ, որ երկրի հպատակ և երբ ծնված և որ երկրացի—ահա այն գլխաւոր հարցերը, որոնց պատասխանելու ոչ մի հոգի չը մնաց օտար։ Գրագէտ թէ անգրագէտ հարցը չը կայ վերեի շարքում, որովհետև այդ աւելորդ է մի երկրում, ուր ստիպողական տարրական ուսում կայ։ Ինչ են ցանկանում իմանալ, ինչու ամբողջ 45 միլիոն ժողովուրդ անհանգիստ են անում անախորժ և օտարօտի հարցերով, ինչու են մարդկանց ինչ լինելը գրի անցնում, քննում, քննադատում, հաշուում, խօսակցութեան զբաղմունքների առարկայ շինում։ Ո՞ւմ ինչ գործն է թէ ով եմ ես, թէ ես աշխատում եմ թէ զատարկաշրջիկ, փողոցները չափող մի շարլատան, թէ ես կին ունեմ, թէ ես նրանից բաժանված եմ, թէ կրկնակի պսակի մէջ եմ, թէ ինչով եմ ապրում՝ սեպհականատէր եմ, կալուածատէր, թէ առօրեայ բանւոր, թէ, թէ և այլն.... Այո, դուք պիտի այդ բոլոր հարցերին պատասխանէք, դուք ստիպված էք, չէք ուզի՝ ոստիկանը ձեր կամակոր վիզը կը կոտրէ, դուք կը զիջէք։ Բայց ում համար, ում ի աթոռն, որի օգտին, ինչ նպատակով և ին տաղրութեամբ.... Իմ և քո օգտին համար, համայնքի, հասարակութեան և ամբողջ տերութեան շահերի համար, վերջապէս գիտութեան պահանջներին հնազանդելու համար, որի, այդ հում նիւթերից արդիւնաբերած գիտական հետևանքները աչքի առաջը դնելով, նոր և նոր պիտի ես ինձ ինքնիս ճանաչեմ և այն՝ աւելի պարզ, աւելի խորունկ քան ուրիշները ինձ ճանաչեցին իմ հատուկտոր պատասխաններով։ Մեզ մօտ—ճշմարիտ մի զժոխքի չարչարանք կը լինէր. մեզանում ամեն մարդ կամաչէ, կը քաշվէ, կը խորշէ ամենաանմեղ հարցերին մի խելացի պատասխան տալու, երբ գործը նրա անձնականութեան, ընտանիքի վրա է. բայց եթէ նա գիտենար, որ այդ ընդհանուր տեղեկութիւններից դուրս բերած թուանշանական անհուն ծովի մէջ նա իր սեփական պատկերը պիտի նշմարէր, բայց աւելի մեծ դիրքով, աւելի որոշ կերպով, եթէ նա գիտենար, որ այդ մի միջոց է մարդու, հասարակութեան և ամբողջ ազգի ոյժերը, դրական ոյժերը չափելու և կշռելու, մի միջոց այն հանգամանքները ուսումնասիրելու, որոնց մէջ նա ամփոփված է և իշխված—այն ժամանակ նա կը պարզէր իր գողտրիկ բնաւորութիւնը և նրա հետ իւրաքանչիւր խելացի մարդ, որի հայեացքները անձնականութեան նեղ շրջանակից դուրս՝ հասարակաց շահերի և ազգային ինքնաճանաչութեան խորին արմատները թափանցելու ազնիւ ձգտումները կունենայ։ Այսօր Եւրոպայում, ինքնա—և ազգաճանաչութեան այդ պարզ եղանակի հետ ամեն մարդ հաշված է, թէպէտ մինչև անգամ այստեղի համար, հեռու է այն ժամանակը, որ հասարակ ժողովուրդը հասկանայ վիճակագրութեան կարևորութիւնը և նրանից բղխած հասարակաց մեծ և անհաշուելի օգուտները։ Բաւական է, որ տերութիւն հրամանը հնազանդութեամբ լսվում է և պահանջածը՝ ճշդութեամբ կատարվում։

Այդ առարկայի վրա ընդարձակվելուց առաջ, նախ նկարագրենք այն ձևը, որով կատարվում է վիճակագրութիւնը մի ամբողջ տերութեան մէջ և ինչ նշանաւորն է՝ մի օրում. խօսենք ընդհանուր։ Մայրաքաղաքում գտնվում է մի բիւրօ, մի գրասենեակ ստատիստիկական-վիճակագրական,-բոլոր տեղեկութիւնների համար. պաշտօնեաներն են՝ մի կառավարիչ—դիրեկտոր, որը գիտնականապէս պատրաստված մի անձն է, և այդ գիտութիւնը՝ քաղաքատնտեսութիւնն է։ Ինչու—այդ յետոյ կը տեսնէ ընթերցողը։ Նա ունի մի քանի օգնականներ և բազմաթիւ այլ ստորադրեալ ծառայողներ, որոնք կատարում են տեսչի հրամանները։ Հարկաւոր է մի վիճակագրութիւն անել. գործը դիւրին է. տպագրվում է մի տոմսակից, յայտնի հարցերով, այնքան օրինակ, որչափ, ենթադրութեամբ, ազգաբնակութեան թիւը կը հասնէ։ Օրինակ, Գերմանիան ունէր 1875-ին փոքր ինչ աւելի քան 42 միլիոն բնակիչ. միւս կողմանէ նախկին տարիների փորձերից գիտեն, թէ գերմանական ժողովուրդը բազմանում է տարեկան՝ Պրուսիայում (1820—61 թիւ) 1,16 (մէկ և 16 հարիւրերորդ) %, Բավարիայում քիչ աւելի քան ½ % և այլն, և այդ հաշիւներով դուշակում են, որ այժմ ազգաբնակութիւնը հասած կը լինի մօտ 45 միլիոնի։ Ուրեմն այդ տոմսակից տպվում է 45 միլիոն հատ և ուղարկվում է երկրի բոլոր գիւղ ու քաղաքները, կրկին ընդունելով այս կամ այն գիւղում՝ այսքան և այնքան բնակիչ։ Տեղական ոստիկանութիւնը ցրում է այդ տոմսակները ամեն մի տան մէջ այնքան օրինակներ, որքան այդ տանը անձինք կան, տասը բնակչի համար—10 օրինակ և այլն. այդ տոմսակները անուանվում են «անձնական տոմսակներ» (Personenkarten, cartes-individuelles), որովհետև այն հարցերը, որոնք առաջարկված են այդ տոմսակների վրա—միայն իւրաքանչիւր անհատին են վերաբերում, լինի նա մինչև անգամ մի օրեկան երեխայ։ Բացի այդ անձնական տոմսակներից, բաժանում են իւրաքանչիւր տան վրա մի մի մեծ թերթ, «տանպահութեան» կամ «օջախի» թերթ անուանեալ (Haushaltungsliste, listes par mènage), այսինքն ամբողջ գերդաստան համար մի հատ թերթ, և կամ, եթէ այդ տան մէջ մի քանի առանձին տնապահութիւններ կան—նոյնքան և մեծ թերթեր են բաժանվում։ *) Ինչպէս որ անձնական տոմսակը իւրաքանչիւր անհատի համար է, այնպէս էլ տնապահութեան թերթը—տանտիրօջ համար է նշանակված, որը, իր սեփական պատասխանատուութեան տակ, պատասխանում է առաջարկած հարցերին, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի ընդհանուր հաշիւ, մի ռեզիւմէ, այդ տան մէջ ցրված բոլոր անձնական տոմսակների բովանդակութեան։ Տոմսակների և թերթերի բաժանելը կատարվում է մի տասը օր առաջ, որպէս զի դեկտեմբերի 1-ին, ամեն բան պատրաստ, ծառայողները կարողանան հաւաքել և ուղարկել նոյն կամ միւս օրը կենտրոնական գրասենեակը—մայրաքաղաքում։ Ինչու դեկտեմբերի մէկին։ Որովհետև դեկտեմբեր ամիսը տարվայ այն ժամանակն է, երբ ամենից սակաւ մարդիկ բացակայ են լինում իրանց սեփական տնից, գիւղից, քաղաքից. իսկ ամսի մէկին—որովհետև վիճակագրութիւնը կարող է շատ կորցնել իր գիտական նշանակութիւնը, եթէ նա ճիշդ պատկեր չը լինէր մի օրուայ, ժամուայ, մի յայտնի և հաստատ դրութեան.-երկու-երեք-օրում կարող են մի ամբողջ երկրում հարիւր հազարներ մեռնել—ևս աւելի ծնվել, երկրից դուրս գալ, պսակվել, բաժանվել և այլն։ Հարկաւոր է, որ այդ փո-

*) Մենք յիշում ենք, որ Թիֆլիսի 1876 թ-ի վիճակագրութեան համար, բաժանվեցան միայն տնապահութեան թերթեր։ Այդ վատ չէ, և գերմանական մի քանի երկիրներում (մանաւանդ Բաւարիայում) միայն այդ են բանեցնում. մի և նոյն ժամանակ «անձնական» տոմսակները այնպիսի լաւ կողմեր ունեն, որ հռչակաւոր վիճակագրագէտ Էնգելը (Բերլինում) մի ժամանակ ցանկանում էր մտցնել Պրուսիայում միայն այդ եղանակը և տնապահութեան թերթերը ծիանգամայն գործ չածել։ Այդ փոխադարձ գերազանցութիւնները ունենալով միայն տեխնիկական նշանակութիւն, ցանկալի կը լինէր որ թէ Թիֆլիսինը և թէ այլ վիճակագրական բիւրօներ, որ ապագայում հաստատվելու կը լինեն, ընդունէին երկու եղանակներն էլ միասին, որը նաև Եւրոպայում ամենատարածված է։

պատմածները, նշանակում է թէ դրանք ճշմարտութիւն են։

—

«Судебные Порядки» շաբաթաթերթի վերջին համարում պատմվում է ինչպէս պ. Բաշէտ, Թիֆլիսի դատաստանական պալատի անդամ, բռունցքի ոյժի սպառնալիքով ստիպում է իր ընկերներին ստորագրել դատաստանական վճիռները, կամ նոյն իսկ դատարանի շինութեան մէջ, դատաւորի համազգեստը հագած, ձեռք է բարձրացնում որպէս զի ծեծի Կարաբէգովին, որովհետև սա նկարագրել է իր լրագրում դատաւորի մի տիպ, որի մէջ պ. Բաշէտ իր անձն է ճանաչել։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ հեռագրում են։ «Էջմիածինը իր անտակտ կարգադրութիւններով վիրաւորել է հայ հասարակութիւնը, ոռնակոխ է արել նրա դարևոր, սուրբ իրաւունքները։ Նրա այդ վարմունքի հետևանքն այն եղաւ որ հոգևոր դպրոցի և իգական դպրոցի հոգաբարձուները և եկեղեցիների երեցփոխանները հրաժարական տուին։ Հասարակութիւնը վրդովված է, պարզ տեսնելով այժմ Մանկունու կառավարութեան պտուղները»։

—

ԹԻՖԼԻՍԻ հեռագրական կայարանը վճռել է հիմնել մի երկրորդ բաժանմունք քաղաքիս կենտրոնի մէջ և դրա համար արդէն վարձել է Արծրունու գալէրէայում, Դվօրցովի փողոցի վրա, մի քանի խանութներ, որտեղից հեռագրական թելը անցկացրած կը լինի դէպի գլխաւոր հեռագրատունը։ Դա մեծ յարմարութիւն կը լինի թէ հասարակութեան և թէ մանաւանդ վաճառականների համար։

—

Մարտի 12-ին մայրաքաղաքների փօստը դարձեալ չէ ստացվել Թիֆլիսում։

—

Այս օրերս ուղևորվեցին Թիֆլիսից դէպի Ս. Պետերբուրգ մեր ազնվականութեան և քաղաքային ազգաբնակութեան կողմից ընտրված պատգամաւորները հանդուցեալ Կայսրի թաղման հանդիսին ներկայ գտնվելու համար։

—

ԱՐՄԵԱՆՍԿԻՑ պ. Անդրէաս Հալաճեան ուղարկել է մեզ յօդուտ Կ. Պոլսի «Միացեալ» ընկերութեան 5 բուբլ որպէս իր անդամական վճարը։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՕՏԱՐ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱՅՍՐԻ ՄԱՍԻՆ

—

ԵՐԲ Փարիզի մէջ ստացվեցաւ մարտի 1-ի եղեռնագործութեան լուրը, միւս օրը թէ պատգամաւորների ժողովը և թէ սենատը փակեցին մի օրով ժողովները, որպէս զի դրանով յայտնեն իրանց ցաւակցութիւնը թագաւորի մահվան մասին։ Հեռագիրները հաղորդում են լրագիրներին հետևեալ դատողութիւնները։ „Republique Française“ շնորհաւորում է սենատին և պատգամաւորների ժողովին, որ նրանք փակեցին իրանց նիստերը թագաւորի մահուան պատճառով։ Դրանով Ֆրանսիան ցոյց տուեց իր ցաւակցութիւնը Ռուսաստանին պատահած դժբաղդութեանը և իր անբաւականութիւնը ստոր և անպնիւ դաւադիրներին։ Այնուհետև „Republique Française“ ցոյց է տալիս, թէ մինչև որ աստիճան մարդասէր և մեծահոգի էր Հանգուցեալ Կայսրը, իսկ միւս կողմից, թէ որքան անլսելի է կառավարութեան թշնամիների թիւը, որոնք այնու ամենայնիւ արգելում են առաջադիմութեանը։ Խօսելով Կայսր Ալէքսանդր III-ի մասին, „Republique Française“ նկատում է, որ նոր թագաւորի մեծ ազդասիրութիւնը կապում է նրան Ռուսաստանի հետ և նրա ամենամեծ հոգսը Ռուսաստանի բարօրութիւնն է։ Վերջը լրագիրը Ռուսաստանին կատարեալ զարգացումն և բարօրութիւն է ցանկանում։ Գրեվիի օրգան „Paix“ լրագիրը իր յօդուածը վերջացնում է հետևեալ խօսքերով։ „Ս. Պետերբուրգի չարագործները դաւաճանեցին մարդկութեան, Ռուսաստանի և ազատութեան շահերին։ Նրանք արժանացան պախարակութեան լուսաւորված բոլոր երկիրների, մանաւանդ Ֆրանսիայի, որ բացի իր զգացած սարսափը, իրան վիրաւորված է համարում նրանով, ինչ որ ամօթ է բերում ճշմարիտ առաջադիմութեանը։ „Temps“, „Journal des Dèbats“, „Moniteur“ լրագիրները, նոյնպէս և պատգամաւորների ժողովի զանազան կուսակցութիւնների օրգանները պախարակում են մարտի 1-ի չարագործութիւնը և գովում են Հանգուցեալ Կայսրի մարդասիրութիւնը և մեծահոգութիւնը։

Անգլիական „Times“ լրագիրը նկատում է, որ Հանգուցեալ Կայսրի և գերմանական Վիլհելմ կայսրի մեծ բարեկամութիւնը եւրոպական խաղաղութեան գրաւականն էր։ Լրագիրը յոյս ունի, որ Կայսր Ալէքսանդր III կիմանայ, թէ որքան անհրաժեշտ է բարեկամական յարաբերութիւններ ունենալ օտար պետութիւնների հետ։

Բելգիայի մէջ հրատարակվող „Nord“ լրագիրը նկատում է հետևեալը։ Ռուս ժողովուրդի ցոյց տուած վիշտը և ոգևորութիւնը, որով նա ողջունեց նոր Կայսրին, պէտք է ապացուցանեն չարագործներին, որ իրանց նպատակները յեղափոխութիւն գործելու մասին բոլորովին չեն աջողվի։ Եթէ նրանք չեն կամենում միայն մարդասպանութիւններ անել, ուրեմն նրանք ստիպված կը լինեն խոնարհվել իրանց անզօրութեան առաջ, որ տարաբաղդաբար ստացվեցաւ Ռուսաստանի բարերարի կեանքի գնով։

---

### ԳԵՐՄԱՆԻԱ

—

Լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները իշխան Բիսմարկի այժմեան դրութեան մասին Գերմանիայի մէջ։ Բերլինի մէջ տարածված լուրերը Բիսմարկի հրաժարականի կարելութեան մասին բոլորովին անհիմն են։ Այդ լուրերին առիթ տուեց այն հանգամանքը, որ գերմանական թագաժառանգը չափազանց անբաւական էր Բիսմարկի վերջին վարմունքից ըէյխստագի վերաբերութեամբ։ Բայց դրանից չէ կարելի եզրակացնել, որ գերմանական կանցլերը հրաժարական կը տայ։ Շատերը հաւատացնում են, որ Բիսմարկ կը մնայ իր պաշտօնի մէջ, քանի որ կենդանի է կայսր Վիլհելմը։ Բայց ամենից հաւանական է, որ Բիսմարկ կը վարէ իր պաշտօնը մինչև իր մահը։ Թէպէտ թագաժառանգը նրան շատ անգամ ընդդիմադրում է ներքին հարցերի վերաբերութեամբ, բայց արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ ամենքը հաւատում են միայն Բիսմարկին, նրան Գերմանիայի միակ յոյսը և նեցուկը համարելով։ Բերլինի քաղաքական բարձր շրջանների մէջ ամենքը համոզված են, որ Ֆրանսիան միշտ առանձնացած կը մնայ, քանի որ կենդանի է Բիսմարկ և իշխանութիւնը նրա ձեռքին է, որովհետև Բիսմարկ այնպիսի մեծ ազդեցութիւն ունի եւրոպական պետական մարդիկների վրա, որ նրանցից ոչ ոք չի կամենայ դաշնակցութիւն կապել Ֆրանսիայի հետ, որպէս զի Բիսմարկ չը թշնամանայ նրա հայրենիքի հետ։ Քանի որ երկրի մէջ տիրում է այդպիսի համոզմունք, Գերմանիայի ոչ մի թագաւոր գործերից չի հեռացնի այդպիսի մարդուն։ Իսկապէս այդ համոզմունքը բոլորովին ճիշդ է, եթէ 'ի նկատի առնենք օտար պետութիւնների այստեղ ապրող ներկայացուցիչների դրութիւնը։ Սրանցից ոչ ոք չէ կարող այցելել գերմանական կանցլերին, մինչև առաջուց թոյլատրութիւն չը ստանայ։ Ինչպէս փոքր պետութիւնների ներկայացուցիչները նոյնպէս և մեծ պետութիւնների դեսպանները պէտք է գրաւոր կերպով յայտնեն իրանց ցանկութիւնը իշխանին այցելելու մասին և գնան նրա մօտ նշանակված ժամանակին։ Մինչև այս ձևը չը կատարվի, Բիսմարկ դեսպաններից ոչ մէկին

---

փոխութիւնները հաշվի ճշդութեան արդեօք չը լինեն։

Ցոմսակները, մանելով կենտրոնական դրասենեակը, ընկնում են տեսչի հսկողութեան տակ, որը այդ տեղեկութիւններից դուրս է բերում իւրաքանչիւր հարցի համար թուանշաններ այն կարգ ու կանոնով, որը պահանջում է գիտութիւնը և կամ որը, իր կարծիքով, կարող է նպաստել և դիւրացնել գիտական հետազօտութիւնները և կամ ծառայել վարչական պիտոյքներին։ Երբ խմբագրութիւնը պատրաստ է, հետևանքները տպագրվում են ի գիտութիւն ամենեցուն։ Այդ մեքենան է, որ մեզ ծանօթացնում է, թէ որ գիւղ, որ քաղաք որքան բնակիչ ունի, որքան նրանցից արու և որքանը իգական սեռից. որքան պսակված, որքան այրի, որքանը բաժանված, որքան մարդիկ կան, որոնք միայն իրանց փողի տակոսով են ապրում, որքանը կալուածներով, երկրագործութեամբ և արհեստներով. որքանը՝ ձեռքի աշխատանքով և որչափ՝ մտաւոր աշխատանքով. որքան առօրեայ բանուորներ կան, որքան առևտրական և այլն և այլն։ Յետոյ՝ որքան երեխաներ կան երկրում մինչ 5 տարեկան, և որքան հոգի մինչ 10, 20—30—40—100 տարեկան։ Ըստ երևոյթին, այս վերջի հարցը շատերին կարող է թվել, որպէս մի լոկ երեխայական հետաքրքրութիւն. իսկապէս—այդ մի շատ նշանաւոր հարց է մի երկրում, ուր ընդհանուր զինուորական պարտականութիւն կայ և ընդհանուր քաղաքական ձայնակցութիւն, այսինքն պատգամաւորները ընտրելու ընդհանուր իրաւունք կայ, որովհետև այդ պարտքը և այդ իրաւունքները սեպհականացվում են իւրաքանչիւր քաղաքացուն միայն մի յայտնի հասակ հասնելուց յետ. իսկ երեխաների վերաբերեալ տեղեկութիւնները ունեն այնքան բաղմադիմի նշանակութիւններ, որքան առհասարակ հիմնարկութիւններ կան մի երկրում, որոնք իրանց նպատակների բնաւորութեամբ այսպէս կամ այնպէս երեխաների շրջանի հետ կապակցութիւն ունեն։ Բացի դրանից, իւրաքանչիւր գիտութիւն համարեա կարող է այդ թուանշաններից իր համար մի օգուտ քաղել. ով ցանկանում է մի երկրի ազգային կեանքը ուսանել—թող իր աչքը ձգէ միայն այդ թուանշանների շարքի վրա և նա կը գտնէ այդ չորութեան մէջ ամենահաւատալի ճարտարութիւն։ Բայց թէ այդ կողմից մի երկիր որքան կարող է տարբերվել միւսից, թող պատմէ հետևեալ հանգամանքը. 10,000 բնակիչների վրա գալիս են մինչև հինգ տարեկան երեխաներ Ֆրանսիայում 929, Անգլիայում 1,306, Պրուսիայում 1,510, հնգից մինչև 20 տարեկան Ֆրանսիայում 2,683, Անգլիայում 3,228, Պրուսիայում 3,155 և քսանից մինչ 30 տարեկան Ֆրանս.—1,634, Անգ. — 1,752, Պրուս. 1,725։ Մինչև 30 տարեկան ուրեմն Ֆրանսիան ունի աւելի քիչ թուով մարդիկ (մարդ և կին), քան Անգլիան և Պրուսիան, բայց տեսէք ինչպէս է պատկերը փոխվում. նոյն տասը հազարի վրա 30-ից մինչ 40 տարեկան հաշվում է Ֆրանսիան 1,475 մարդիկ, Անգլիան— 1,308 և Պրուսիան 1,345, 40-ից մինչ 60 տարեկան Ֆրանս. 2,264, Անգլ. 1,672, Պրուս. 1,663 և վերջապէս 60-ից մինչ 100 տարեկան Ֆրանս. 1,015, Անգլ. 734 և Պրուս. 602 մարդիկ։ Բայց մենք բերինք այդ իբրև օրինակ, ուրեմն դուրս չելնենք օրինակների համար զրականապէս թոյլ տուած օրինաւոր շրջանակից։ Ինչպէս ասած, հարցերի և համեմատութիւնների համար ասպարէզը այնքան լայնարձակ է, որքան, մանաւանդ տնտեսապէս, զարգացած մի կեանք չօշափելի կէտեր և երեւոյթներ կարող է ներկայացնել։ Այո, մինչև անգամ մարդուս հոգեբանական շարժողութիւնները, զգացմունքները այն աստիճանով միայն ի հարկէ, որքան նրանք մարդուս դրական գործողութիւնների վրա ազդել կարող են— վիճակագրութիւնը աշխատում է (դժբաղդաբար պիտի ասած, մինչ այժմ բաւականի անաջող կերպով) իր հետազօտութիւնների շրջանը մտցնել. և այդ վիճակագրութիւնը, որովհետև նա գործ ունէ մարդուս հոգեկան զգացմունքների հետ, որոնցից առաջացած գործողութիւնները մենք սովոր ենք «բարոյական» կամ «անբարոյական» անուանել (պսակը, օրինաւոր և ապօրէն ծնունդները, գողութիւնը, աւազակութիւնը, արբեցողութիւնը և այլն), կոչվում է այդ պատճառով «բարոյականութեան վիճակագրութիւն» (Moralstatistik, statistique morale) կամ, աւելի սահմանափակ մտքով «դատաստանական վիճակագրութիւն» (statistique judiciaire)։— Մինչդեռ բարոյականութեան վիճակագրութեան հիմքը հաստատված է այն տուածների վրա, որոնց առաջարկում է փիլիսոփայութիւնը, հոգեբանութիւնը և քաղաքա-տնտեսութիւնը միասին *) միւսը, որով հասարակօրէն հասկանում են «վիճակագրութիւն» անունով, հիմնված է համարեա յատկապէս քաղաքա-տնտեսութեան գիտութեան վրա, որովհետև նրա հետազօտութիւնը ըմբռնում է ընդհանուր տնտեսական երևոյթները։ Թէ ինչ պիտի չինէ, հեռաղօտ վիճակագրութիւնը, այդ սրան պատուիրում է քաղաքա-տնտեսութիւնը, որը նրանից մի և նոյն ժամանակ խլում է նրա թուանշանները և ինքը գործ է դնում։ Ահա ինչու վիճակագրագէտը, ինչպէս նաև ստատիստիկական—վիճակագրական—դրասենեակների տեսուչները մի և նոյն ժամանակ քաղաքատնտեսներ են և պիտի լինեն։— Այդ է մի և նոյն ժամանակ պատճառը, թէ ինչու վիճակագրական հետազօտութիւնները սկսեցին մեծ նշանակութիւն ստանալ, երբ Եւրոպայում տնտեսական պայմանները սկսեցին աւելի բարդվել սկսեալ անցեալ տարվայ վերջերից։ Այդ երևոյթի մասին մենք արդէն խօսել ենք մեր առաջվայ յօդուածներում,**) միայն աւելացնենք այստեղ որ վիճակագրութեան սկզբունքները երևում են արդէն 15-րդ դարում (Ֆրանչեսկո Սանսովինո), 16-րդ դարում (Նիկոլա Ֆրուսմանտո, Էթիէն Հաքիէ, Բոտերո, Դաւրնան Կինգ, 17-րդում—(Վիլիամ Պէտտի) 18-ում (Կոնրինգ, Սեկենդորֆ, Սարուվէ, Մ. Շմայցել, մանաւանդ Ախենվալ, Շլեօցցեր և այլն, բայց մանաւանդ Զիւսմիլխ, որի հռչակաւոր գիրքը՝ Աստուածային կարգը մարդկային ցեղի փոփոխութիւնների մէջ այդ գիտութեան համար մի նոր շրջան է բացում. ինքը քահանայ էր)։ Ներկայ դարում—Ֆրանսիայում՝ Գերրի, Դիւֆո, Քէտլէ, *) Մորո դը Ժոննէս, Ֆէ, Բլոկ և այլն. Անգլիայում՝ Լոնդոնի հռչակաւոր ընկերութիւնը վիճակագրութեան, Իտալիայում՝ Կոբրինաի, Մեստրո, Բոդիո. Մորպուրգո։ Գերմանիայում և Աւստրիայում Ֆալլատի, Կնիս, Ժոնակ, Շտայն, Ր. Մոլ, Բիմլին, Կնապպ, Էնգել, Մայըր և այլն։ Մենք բաւականացանք ի հարկէ միայն անուններ յիշելով, որովհետև մի հայ գրող, այժմեան բոպէում, մի անտանելի դրութեան մէջ է գուցէ չը գտնել իր ընթերցողների մօտ այն ճաշակը իմացական և գործնական առարկաների համար, որը ձեռք է բերվում կամ երբ ժամանակի հոգին մարդուս դէպի այդպիսի զբաղմունքներ տրամադրում է և կամ երբ մարդս ինքը իր սեպհական դրդմամբ իրան զոհում է նրանց։

Մենք կը վերջացնենք այս յօդուածը կրկին վերադառնալով Գերմանիայում դեկտեմբերի վիճակագրութեան, որի հետևանքները, իրանց ամբողջութեամբ, ինչպէս արդէն նկատելու առիթ ունեցանք, միայն մի տարուց յետ յայտնի կը լինեն։ Առ այժմ յայտնի են միայն գերմանական մեծ քաղաքների բնակիչների թիւերը։ Բացի այն, որ այդ ինքն ըստ ինքեան մարդու ուշը գրաւում է, իբրև հետաքրքիր մի գիտելիք, մեծ քաղաքների վիճակագրութեամբ ամենապարզ և գրական կերպով ցոյց է տրվում և ապացուցվում այն միտքը, թէ մեր ժամանակում քաղաքները քանի գնում—այնքան բազմամարդ են դառնում, այնքան խտանում են, և երկրորդ, ինչ ամենա-

---

*) Մի այլ անգամ, եթէ ժամանակիս կը ներէ, կաշխատենք ծանօթացնել ընթերցողին այդ վերին աստիճանի հետաքրքիր գիտութեան հետ, որը, ինչպէս արդէն նկատեցինք, ծրնդեան խանձարուրի մէջ է։

**) Տես «Եւրոպայի հարստութիւնները» Մշակ, 1879. № № 85, 86, 87, և «Զեռնարկութիւնների ձևեր և առևտրական ընկերութիւններ» Մշակ 1879 № № 177, 178, 179, 180, 181, 182.

*) Որը առաջինը իր Phisique sociale գրքով հիմք դրեց «բարոյականութեան վիճակագրութեան»

չի ընդունի։ Եթէ մի այլ պետութեան արտաքին գործերի մինիստրը այդպէս վարվէր, դա վիրաւորանք կը համարվէր։ Իսկ այստեղի դեսպանները հպատակում են իշխանի այդ կամքին։ Դժուար է երևակայել, թէ քաղաքագէտները առհասարակ և մանաւանդ նրանցից երիտասարդները մինչև որ ատիճան ենթարկվում են Բիսմարկի ազդեցութեանը։ Դա մի կոյր երկրպագութիւն է։ Կարելի է հաստատ ասել, որ նրանցից իւրաքանչիւրը ուրախութեամբ կը զոհէր իր կեանքի կէսը, միայն թէ „փոքրիկ Բիսմարկ“ անուանվելու պատիւն ունենար։

Նորերում Բերլինի պալատական եկեղեցու մէջ Շտեօկեր քարոզ էր կարդում երեխաներին մկրտելու անհրաժեշտութեան մասին։ Բանն այն տեղն է հասել, որ քահանան ստիպված է լինում եկեղեցական ամբիօնից համոզել ժողովուրդին, որ նա իր երեխաներին առանց մկրտութեան չը թողնէ։ Շտէօկեր հաշուում էր իր ծանօթ մի քանի ընտանիքներ, որոնց հասակաւոր երեխաները դեռ մկրտված չեն և վերջապէս մի տուն անուանեց, որտեղ զանազան սեռի չը մկրտված 22 անդամներ կան։ Միևնոյն ժամանակ նշանաւոր է, որ քարոզիչը խօսում էր ոչ թէ բարձր դասի, ինտելիգենցիայի մասին, որի անհաւատութիւնը առհասարակ կրթութեան և —մանաւանդ բնական գիտութիւնների վատ ազդեցութեան են վերաբերում, այլ հասարակ բանուորների մասին, որոնց գիտութիւնը գրագիտութիւնով և սկզբնական ուսումնարանի մէջ ստացած կրթութիւնով է սահմանափակվում։

## ԱՆԳԼԻԱ

Անգլիական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ շուտով մինիստրութիւնը մի քանի փոփոխութիւնների կենթարկվի։ Կառավարչական օրգան „Daily News“ լրագիրը այդ լուրերը վաղաժամանակեայ է անուանում, մի և նոյն ժամանակ այն փոփոխութիւնները, որոնց կենթարկվի անգլիական մինիստրութիւնը, այնու ամենայնիւ. կը պահպանեն կառավարութեան այժմեան բնաւորութիւնը։ Գլադստօնի ծերութիւնը նրան թոյլ չէ տալիս միաժամանակ վարել առաջին մինիստրի և Ֆինանսների մինիստրի պաշտօնները։ Այժմ դիտաւորութիւն կայ Ֆինանսների մինիստրութիւնը մի այլ անձի յանձնել։

Կառավարութիւնը, թէպէտ և ուշ, սկսել է կատարել այն յանձնարարութիւնը, որ նա ստացաւ երկրից ընդհանուր ընտրութիւնների ժամանակ. երկու շաբաթից յետոյ անգլիական ոչ մի զինուոր չի լինի Աֆգանիստանի մէջ։ Զինուորականները և լօրդերը չափազանց անբաւական են այդ կարգադրութենից։

Դժուար է նախագուշակել, թէ անգլիական ներքին գործերը ինչպիսի ընթացք կը ստանան մի քանի շաբաթից յետոյ։ Ամենքը հաւատացնում են, որ այժմեան կառավարութիւնը շատ հաստատ է, որովհետև համայնքների ժողովի մէջ նրա կուսակիցները նշանաւոր մեծամասնութիւն են կազմում։ Բայց այդ մեծամասնութիւնը կազմող ազատամիտների և արմատականների նպատակները այնքան տարբերվում են, որ դրանք վաղ թէ ուշ անբաւականութիւն կունենան և հակառակ բանակների կը բաժանվեն։

Ազատամիտ կուսակցութիւնը բաւական է այժմեան կառավարութենից։ Ասում են, որ լորդ Բիկոնսֆիլդ յարմար րոպէի է սպասում, որպէս զի պահպանողականների, արմատականների և իրլանդացի պատգամաւորների օգնութեամբ կառավարչական փոփոխութիւն անի։ Բայց կարելի է հաստատապէս ասել, որ եթէ ընդհանուր նոր ընտրութիւններ լինեն, պահպանողականները նշանաւորն է, այդ խոտութիւնը կախված է երկրի տնտեսական զարգացումից։ Մենք այդ կը տեսնենք ներքև, այժմ տեսնենք թէ ինչ է ասում վիճակագրութիւնը։

Գերմանիան ունի այժմ 14 քաղաք, որոնցից իւրաքանչիւրը հարիւր հազարից աւելի բնակիչներ ունի. դրա են Բերլին—1,118,630 հոգի, Համբուրգ—290 հազար, Բրեսլաու 272 հ., Մինխէն—228 հ., Դրեզդէն—220 հ., Լայպցիգ—148 հ., Կեօլն—144 հ., Կեօնիգսբերգ—140 հ., Ֆրանկֆուրտ 136 հ., Հաննօվէր—122 հ., Շտուտգարտ—117 հ., Բրեմէն—112 հ., Դանցիգ—(դեռ յայտնի չէ, բայց կունենայ) 110 հ., վերջապէս Ստրասբուրգ—106 հազար։ Դրանցից յետ գալիս են ութ քաղաքներ 90-ից մինչև 100 հազար բնակիչ ունեցող (Նիւրնբերգ, Մագդեբուրգ, Բարմեն, Կեմնից *), Դիւսելդորֆ, Էլբերֆելդ, Շտետին և Ալտօնա, որը միանդամայն կպած է Համբուրգի հետ.)։ Ախեն—85 հ., երեք քաղաք 70-ից մինչ 80 հազար ունեցող հինգ—60 մինչև 70 և վերջապէս 8 քաղաք իւրաքանչիւրը 50-ից մինչև 60 հազար բնակիչ ունեցող։ Իսկ միւս քաղաքները, որոնք յիսուն հազարից սկսած մինչ հինգ հազար բնակիչ ունեն—մանր քաղաքների հաշվումն են և դրանց թիւը կը հասնի մի քանի հարիւրների։ Համեմատած հինգ տարուայ առաջ եղած դրութեան հետ, այդ քաղաքները բազմացել են մօտ 10—12%։

Համեմատ այդ թուերի, Գերմանիան ունէ այժմ 39 քաղաք, որոնցից իւրաքանչիւրում բազմութիւնը յիսուն հազարից անց է և միասին տասիս են մի գումար (եթէ ուզիղ ենք հաշուած) աւելի քան հինգ միլիոն և հարիւր հազար բնակիչ, որը, համեմատած տերութեան ամբողջ ազգաբնակութեան հետ, կը ներկայացնէ սրա մօտ 11%, որը արդէն բաւականի մեծ մաս է. իսկ դրա մէջ հեշտ համոզվելու համար, եթէ ընթերցողը վերցնէ Կովկասը իբրև համեմատութեան հիմք, կը տեսնէ որ այնտեղ յիսուն հազարից աւելի ունեցող քաղաքները (որը իսկապէս միայն Թիֆլիսն է իր 104 հ. բնակիչներով) կազմում են երկրի ընդհանուր ազգաբնակութեան, այսինքն հինգ մեկլիոնի միայն 2%! Ուր 2% և ուր 11%! Իսկ այդ մեծ տարբերութիւնը քաղաքների խոտութեան մէջ, մատնացոյց է անում նրանց համարեա նոյնչափ զանազանութիւնը այդ երկու երկիրների տնտեսական զարգացման մէջ։ Այդ տեսակէտը, որը տնտեսութեան վաղուց յայտնի մեթոդն է պատկանում, կարող է երկու կողմից օգտակար լինել. առաջինը՝ համեմատելով մի երկրի զանազան ժամանակները, շրջանները իրար հետ, իսկ երկրորդ, համեմատելով միւս երկիրների քաղաքների հետ։ Առաջինը՝ աւելի օգտակար է, որովհետև նրանով մի երկրի տնտեսական զարգացման ընթացքը կարելի է ուսանել, երկրորդը՝ աւելի ընդհանուր բնաւորութիւն ունէ և կարող է ծառայել զանազան երկիրների այժերը իրար հետ չափելու, որպէս նաև այդ երկիրների տնտեսական ուղղութիւնները իրար հետ համեմատելու համար։ Վերցնենք բաղդատութեան համար Գերմանիա, Ֆրանսիա և Անգլիա։ Եթէ վերցնենք միայն հարիւր հազար բնակչից աւելի ունեցող քաղաքները, ներկայ րոպէումս, Ֆրանսիան Գերմանիայից կը գերազանցէ, որովհետև դրանցից երկրորդը ունէ իր 14 յիշեալ մեծութեամբ քաղաքներում 3 միլիոն 267 հազար բնակիչ, ուրեմն ամբողջութեան (45 միլիոնի) մօտ $13^1/_2$ մասը և կամ, նոյնն է 7%, մինչդեռ Ֆրանսիա իր 9 (հարիւր հազար բնակչից աւելի ունեցող) քաղաքներում հաշվում էր չորս տարի առաջ 3 միլիոն 520 հազար, իսկ այժմ երեի 3 միլ. 700,000 բնակիչ, որը կազմում է երկրի ամբողջութեան (37 միլիոնի) տասերորդ մասը և կամ 10%։ Ինչ կը վերաբերի Անգլիային, այդ կողմից նա յիշեալ երկու երկիրներից աչառակի չափ բարձր է կանգնած։ Եթէ խօսենք միայն բուն Անգլիայի վրա, ուրեմն առանց Շօտլանդիայի և առանց Իրլանդիայի, դրանց մի հատ Լօնդօն մայրաքաղաքը աւելի բնակիչներ ունէ, քան այն բոլոր 14 գերմանական մեծ քաղաքները միասին, այն է մօտ չորս միլիօն! Իսկ միւս 11 (իւրաքանչիւրը հարիւր հազար բնակչից աւելի ունեցող) քաղաքների հետ միասին, աւելի քան 6 միլ. 100 հազար, այսինքն երկրի (առանց Շօտլ. և Իրլանդ. 23 միլ.) աւելի քան 25%! Համեմատենք՝ Գերմանիան 7%, Ֆրանսիան 10%, Անգլիան 25%։ Աւելորդ է աւելցնել, որ Անգլիան, ինչպէս յայտնի է, տնտեսական զարգացմամբ միակն է ամբողջ աշխարհում, և եթէ վերցնենք միայն նրա արտաքին առուտուրը, որը 17 միլիարդ ֆրանկից անց է, երկու անգամ աւելի մեծ է քան Ֆրանսիայինը և աւելի քան այդ՝ Գերմանիայի հետ համեմատած։ Բայց զարմանալի համաձայնութիւն կը տեսնենք, եթէ բաժանենք իւրաքանչիւր երկրի առևտրի գումարը նոյն երկրի ազգաբնակութեան թիվ վրա։ Այդպիսով կը տեսնենք Գերմանիայի համար 180 ֆրանկ, Ֆրանսիայի համար 218 ֆր. (որովհետև եթէ այն երկու երկիրները նոյնչափ առուտուր ունեն, այն է 8 միլիարդ, բայց Գերմանիան ունէ 45 միլիոն բնակիչ, իսկ Ֆրանսիան 37 միլիոն, ուրեմն սրա առուտուրը աւելի մեծ է), իսկ Անգլիայի համար 515 ֆր. (Շօտլանդիայի և Իրլանդիայի հետ միասին, 33 միլիոն բնակիչներով)։ Իսկ բաժանելով այդ թուերը քսանի վրա, որով համեմատութիւնը ոչ մի մաղով չի փոխվի, կը ստանանք առևտրի համար իւրաքանչիւր երկրում համարեա մի և նոյն թուերը, ինչ որ քաղաքների համար, այն է Գերմանիայի համար 9%, Ֆրանսիայի համար $10^1/_2$% և Անգլիայի համար $25^1/_2$%։—Այս, ըստ երևոյթին, պատահական համաձայնութիւնը սակայն բնական հետևանք է նոյն երկիրների տնտեսական դրութեան։

Մէկ կէտ ևս և ահա վերջացրինք, որով նաև կազատենք անսովոր ընթերցողին՝ աչքերը չուռացնող թուերից։ Բայց այստեղ աւելի մեղաւոր են արաբացիք, որոնք այդ թուանշանները հնարել են, քան թէ մենք, որ նրանց ծառայեցնում ենք միայն իբրև գործիք ազգերի կեանքը նկարագրելու համար, որը, ինքն ըստ ինքեան, չորութիւնից շատ հեռու է։

Այդ կէտը՝ այն զարմանալի երևոյթն է, որ Ֆրանսիայում քաղաքները կամ շատ մեծ են և կամ շատ փոքրիկ, մինչդեռ Գերմանիայում իշխում են աւելի միջակ քաղաքներ։ Միջակ անուանում ենք այն քաղաքները, որոնք յիսունից մինչև հարիւր հազար բնակիչ ունեն, իսկ փոքրիկ՝ որոնք յիսուն հազարից աւելի սակաւ ունեն։ Նայէք՝ Ֆրանսիան ոչ մի քաղաք չունի 90-ից մինչև 100 հազար բնակիչներով, դուցէ բացի Հաւրից, որը չորս տարի առաջ գոնէ 85 հազար ունէր, մինչդեռ Գերմանիան, ինչպէս տեսանք, այդ մեծութեամբ 8 քաղաք ունէ. 60-ից մինչ 80 հազար Ֆրանսիան ունէ արդէն 4 քաղաք, Գերմանիան 9. 50-ից—60 հազար Ֆրանսիա 7, Գերմանիա 8։ Իսկ 40—50 հազար դուցէ Ֆրանսիան աւելի ունենայ և կամ գոնէ հաւասար, մինչդեռ 30—40, 20—30 և այլն քանի ցածր իջնենք, այնքան Ֆրանսիայում աւելի քաղաքներ կը գտնենք քան Գերմանիայում։ Պատճառը—պարզ է որպէս լոյս. մինչդեռ Գերմանիայում հարստութիւնները աւելի կենտրոնացած են, Ֆրանսիայում իշխում են միջակ և փոքր հարստութիւնները, ուրեմն մանր կալուածատէրերը և մանր հարուստները և կամ ինչպէս մեզանում այլապէս անուանում են «ունորները», ինչու և այդ երկրում աւելի մանր քաղաքներ կան, քան թէ Գերմանիայում և անհամեմատ աւելի քան Անգլիայում, ուր, ինչպէս յայտնի է, հասարակ ժողովուրդը քիչ նշանակութիւն ունէ, որպէս նաև մանր քաղաքները—աւելի գիւղերի տեղ են, մինչդեռ մեծ քաղաքները այդ երկրում «գազան քաղաքներ» են, որպէս երկրի իշխողները նմանապէս «գազաններ» են։

Ստրասբուրգ. Ա. Արասխանեանց

---

*) Այդ քաղաքը մինչև այժմ ուղիղ ամերիկական քայլերով է առաջանում. 25 տարի առաջ, Կեմնիցը հազիւ 20 հազար բնակիչ ունէր և պատճառը այդ աջողութեան. նա Սաքսոնիայի ամենաարուեստաւոր քաղաքն է։

---

## ԹԻՒՐՔԻԱ

Պանտրմայէն առ Քուռիէ տ'Օրիան գրուած նամակ մի հետևեալ կերպիւ կը նկարագրէ Պանտրմայի մօտակայ Համամը գիւղին մէջ արոց հաւաքման եղանակը։

Տուրք վճարողներէն շատերն իրենց պարտքը վճարելու անկարող լինելով, հարկահաւաքները նոցա պարէնը կը գրաւեն անարգ գնով, եգիպտացորենին 8 ղրուշ գին կը դնեն, մինչդեռ 20 ղրուշի կը ծախուի աւելի մեծ անաջողութիւնների կը հանդիպեն, քան թէ անցեալ 1880 թուականի ընդհանուր ընտրութիւնների ժամանակ։

Դուբլինից լրագիրներին հաղորդում են, որ մարտի 8-ին քաղաքի մէջ մեծ շփոթ էր տիրում, որովհետև լուր տարածվեցաւ, որ 20 իրլանդացիներ են կալանաւորված և այդ հանգամանքը „Habeas Corpus“ օրէնքի դադարման նշանն էր։ Երբ կալանաւորվածներին բերին քաղաքը բանտը դնելու համար, ժողովուրդը աղմկալի ցոյցեր արաւ։ Շատերը մօտենում էին և կալանաւորվածների ձեռքերը սեղմում։ Կալուածական միութեան անդամներից մէկին կալանաւորելու ժամանակ նա ցոյց տուեց գօկուամենտներ, որոնք ապացուցանում էին, թէ կալանաւորվողը ամերիկական հպատակ է։ Պոլիցիականները այդ հանգամանքի վրա ուշադրութիւն չը դարձրին։ Կալուածական միութեան Դուբլինի բաժնի նիստի ժամանակ 'ի միջի այլոց յայտնվեցաւ, որ նախընթաց նիստից յետոյ միութիւնը 1443 ֆունտ ստերլինգ կամաւոր նուիրատուութիւն է ստացել։ Պէտք է ասել, որ կալուածական միութեան ցոյցերը մասամբ օգտաւէտ եղան, որովհետև մի քանի կալուածատէրեր պակասացրին կապալավարձը, թէպէտ շատ տեղերում ֆերմերները արտաքսվում են և իրանց ընտանիքներով մի կոր հացի կարօտ են մնում։

---

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Մարտի 14-ին գերօլդները կը յայտնեն բոլոր ժողովրդին, որ թագաւորի թաղումը կը լինի մարտի 15-ին։ Դատաստանը թագաւորասպանների մասին կը յետաձգվի մի քանի օրով։ Այժմ դատապարտվածները հինգ հոգի են։ Մարտի 10-ին կալանաւորվեցաւ նշանաւոր յանցաւոր կին, որ Գարտմանի համախոհն էր Մոսկվայի ճայթիւնի ժամանակ և մարտի 1-ի եղեռնագործութեանը մասնակցող։ Նա առաջնորդում էր Ռիսակովին։ Պոլիցիան նրան շատ էր փնտռում և կալանաւորեց փողոցում։ Վկաները 70 հոգի են։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխայաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։
32—100

---

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հաւեմատեցէք թէյի գունը | 1 ր. | 5 կ. | | Մոսկվայից բերվող թէյի հետ | | | ֆ. 1 ր. 30 կ. |
| — | — | — | 1 ր. 10 կ. | — | — | — | ֆ. 1 ր. 40 կ. |
| — | — | — | 1 ր. 20 կ. | — | — | — | ֆ. 1 ր. 60 կ. |
| — | — | — | 1 ր. 40 կ. | — | — | — | ֆ. 1 ր. 80 կ. |
| — | — | — | 1 ր. 60 կ. | — | — | — | ֆ. 2 ր. — |
| — | — | — | 1 ր. 80 կ. | — | — | — | ֆ. 2 ր. 50 կ. |
| Ամենալաւը | — | — | 2 ր. — | — | — | — | ֆ. 3 ր. |

56—100

---

Ընդունում եմ **ՄԵՌԱԾ** մարդիկների **ԴԻԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆԵԼԸ** առանց հոտելու մի և նոյն ժամանակ առանց ներքին կազմվածքը վնասելու **ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ ԺԱՄԱՆԱԿՈՎ**։ Երևանսկայա հրապարակ, քաղաքային տուն, պոլիցիայի տակ։ Պարիկմախեր **ԱՐԶՈՒՄԱՆ ՇԱՀՆԱԶԱՐՈՎ**։
4—4 (2)

---

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է „Կենտրոնական“ ու „Կովկասեան“ գրավաճառանոցներում **ՄՕԼԻԷՐԻ „ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ“, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ**։ Գինն է 30 կ.։

---

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ծախվում են հազի դէմ **ԿՕՆՖԵԿՏՆԵՐ** 40 կ. ֆունտը, խինայի գինի ջերմի դէմ 1 ր. 50 կ. շիշը, պարսկական **ՇԵՐԲԵԹ**, ցիտրադ մագնեզիայի ծարաւի դէմ 70 կ., ամենալաւ **ԿՕՆԵԱԿ** 2 ր., հին **ՊՕՐՏ-ՎԷՅՆ** եի խերես 1 ր. 40 կ., **ՄԵՂՐԱՄՕՄ** և չոր **ՍԱՊՕՆ** և այլն։
2—14

---

**ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ** գործարանական գներով **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ **ԱՐԾՐՈՒՆՈՒ** գալերէյում։ Նոյն տեղը ծախվում են անգլիական ֆիլտրոներ, մանանեխ, օսլայ (կրախմալ), կակաո, շոկոլադ, բաժակներ և դէմքը գեղեցկացնելու համար ծրծմբէ, կաթնի, նուշի և զլիցերինի իւղ։ Հրացաններ նոր ձևի։
2—12

---

ՆՈՅ 11
գրատ գոհոփգո ‹ճնեսփ վշվՍ ։Ոողոմգիդ տգՀ մվ զվմզղնեսճոիդոճ Հ յրտզրտնեղ ոգեռ ։Ոողոտոո մզղվՀոատոռ Հ յրտզզրտգ ‹մզղոզդՁզր ռոկզղՀ **ԶՏՍԶ Ղ ԶՏՄՈ** վզրս մս ‹**ԷՍՎՎՈՈՂ ՎՎՎՈՈԷ**
2—3

---

**ՍԵՐՄԵՐ** պարտիզի բոյսերի և **ԾԱՂԻԿՆԵՐԻ** բոլորովին **ԹԱՐՄ** ստացված են Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան գործակատարի խանութի մէջ։ Գօլովինսկայա փողոց № 11։ **ԼԱՐՇԷԻ** խանութ։ Սերմերի ցուցակները ձրի են տրվում։
5—10

---

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի Հայ գրավաճառների մօտ Կ. Կոստանեանցի „Գրաբառ բայերի ԽՈՆԱՐՀՈՒՄԸ մի աղիւսակի մէջ, գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար“։ Գինը՝ հատով՝ 25 կոպ., զումարով՝ 20 կ.։

Այս գրքոյկը պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախագիտելիք, յանդերի, օրինակների և խոնարհման ամիսի աղիւսակներ՝ շատ հեշտացնում է աշակերտաց գրաբառ բայերի ուսումը։ Ի նկատի ունենալով գործի օգտակարութիւնը և գնի թեթևութիւնը համարձակ կարելի է խորհուրդ տալ գրաբառ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկասիրութիւնը։

Նոյն հեղինակի „Հիւսուածք հայ պատմագրաց“, 3 հատոր (3 ր.) և „Հայոց հեթանոսական կրօնը (30 կ) կարելի է նոյնպէս Թիֆլիսի գրավաճառներից կամ ուղղակի հեղինակից ստանալ։

---

**ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԻ**, մատուցարանների, կողպէքների, գրիչների, Թղթի, հրացանների, ատրճանակների, բաժակների, ցիտրատ-մագնեզիայի, կօնֆէկտների, մուրաբայի և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ**։

Նոյն տեղը **ԾԱԽՎՈՒՄ ԵՆ** պալատներ 12 ռուբլուց, բրիւկներ 4 ռուբլուց, տրիկո արշինը 70 կոպէկից, տարելկաներ 12 ռուբլուց հատը, կեսխարինեան թէյ գարնանը հաւաքած ուղղակի պլանտատորներից 1 ր. 10 կոպէկից մինչև (ամենալաւը) ֆունտը 2 ռուբլի առանց Թղթի, մակինտոշներ 8 ռուբլուց, և մուրաբայի մէկ վագոնը 85 կոպէկով։
9—12

---

**Ա. ՊՐԻԴՕՆՕՎԻ ԵԻ ՇԱՀՆԱԶԱՐՕՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ, ՍԵՐԳԻԵՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ, ՊԵՏԱԿԱՆ** բանկի բաժնի հանդէպ, **Տ. ՊՐԻԴՕՆՕՎԻ** № 7 գնում է և ծախում է տօկօսաբեր Թղթեր, ոսկի և սերիաներ։ Ընդունում է դրամական մուտքեր պահելու և ընթացող հաշուին։ Ներքին տօկօսաբեր փոխառութեան տոմսակների գրաւականով $7^1/_2$% պարտք է տալիս 205 ր.։ Ապահովում է ներքին տօկօսաբեր փոխառութեան տոմսակները ոչնչանալուց 50 կ.։ Օտարաքաղաքացիներից գրասենեակը խնդրում է ուղարկել ինչպէս և փոստի ծախսը նոյնպէս և մարկաների իւրաքանչիւր ապահովագրին 10 կ.։
3—3

---

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

---

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

---

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց Թղթի։ Անգլիական բէվօլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, Ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաշոկոլադի ծախելու համար, որոնք Փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Պաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը։
41—100

---

Մամուլի տակից դուրս եկան և վաճառվում են կենտրոնական գրավաճառանոցում հետևեալ գրքերը. Հենչէլի բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ, ծխական դպրոցների համար. փոխադրեց Ս. Մանդինեան 1-ն և 2-րդ տարի. Թիֆլիս 1881 գ. 40 կ.

Գրաբար բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար. յօրինեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, գ. 25 կ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը.

Սիրաք և Սամուէլ։ Բարի հօր կրթական դասեր։ Գրեց Խրիմեան Հայրիկ Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Լ. Զէստրֆիլտի խրատ առ որդին իւր. Վենետիկ գ. 75 կ.

Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Թուղթ Մարկոսի Աղաբէգեանց։ Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցու ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական Տէր Ներսէս պատրիարք Հայոց Կ. Պոլիս գ. 2 ր. 25 կ.

Պարոնեան, Ազգային ջոջեր 3 հատոր, Կ. Պոլիս գ. 3 ր. 5 կ.

Մանանայ։ Ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 75 կ.

Տարերք խմաստասիրութեան ընդարձակ Ի. Հ. Աբ. Վ. Գուրգենեան 5 Հ. Կ. Պոլիս գ. 3 ր. 50 կ.

Խորհրդական բերդը։ Վիպասանութիւն Ֆօժէր օր. Գաղիացւոյ, Վենետիկ գ. 1 ր.

Լաճակիս ձկնորսը, յօրինեց Հ. Ե. Վ. Խաչերտեանց։ Վենետիկ գ. 1 ր.

Միանսարեանց. Բնար Հայկական Ս. Պ. Բ. գ. 1 ր. 30 կ.

Մուզայք Հայաստանի։ Նոր երգարան Թիֆլիս գ. 50 կ.

Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ. աշխ. Գ. Երեցփոխեանց Թիֆլիս գ. 4 ր.

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ր. համար 10 կ. պատուէրները պէտք է ուղարկվեն այս հասցէով „Въ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю“.

---

**ԱԼԻՑԵԼԵԱՆ ԷՏԱՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԷՏԱՄՆԵՐՈՑԺ ԲԺԻՇԿ Լ. Ի. ԷՊԵԼՀԷՅՄԻ** թոյլ են տուած **Մոսկվայի ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՑ**։ Այդ միջոցները մեծ **ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ** գտել և առաջարկվում են իբրև **ԱՄԵՆԱԼԱՒ** առողջապահական **ՄԻՋՈՑՆԵՐ** բերանի և ատամների համար։ Կարելի է **ԷՏԱՄՆԵՐԸ** պահպանել **ՓՕՇԻՆԵԼՈՒՑ**, սառեցնում են **ԼՕՐՉՈՒՆԲԻ ՎԱՐԸ** և վատ **ՀՈՏԻ** առաջն են առնում։

Ատամնաբոյժ բժիշկ Ա. Ի. Աղելհէյմի **ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ** գտնվում է **ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՍՕԿՕԼՕՎԻ** տանը։

**ԹԻՖԻՍՈՒՄ** կարելի է գտնել Ա. Մ. **ՑՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ** և անդրկովկասեան գլխաւոր **ՊԱՀԵՍՏՈՒՄ**։

Ծախողների **ՆՇԱՆԱՒՈՐ ՋԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ**։
20—30 (11)

---

**ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ** ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ Թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է Թէյ, ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ Թէյ առաջին տեսակի, կակաո և շոկոլադ-ֆրայ, մուրաբա և կօնֆէկտներ 25% աւելի էժան, քան Թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բէվօլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ատամներ, դանակներ, գդալներ, Թէյամաններ, բաժակներ, Թասքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, Թաշկինակներ, մակինտոշներ, կալենկոր, Թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան Թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալէրէում։
100—64

---

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Марта 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.